ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
29 մարտի 2018 թվականի N 40-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «Ա. ՍԱՐԳՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՏԵՂԻ ԹԻՎ 1 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով, ՀՀ կառավարության 2010թ. մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով, հիմք ընդունելով ՀՀ կրթության և գիտության նախարարի 2018 թվականի մարտի 28-ի N 01/10/3500-18 գրությունը՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. Չեղյալ ճանաչել ՀՀ Սյունիքի մարզի «Ա. Սարգսյանի անվան Տեղի թիվ 1 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2018 թվականի փետրվարի 28-ին անցկացված մրցույթի արդյունքները:

2. Առաջարկել ՀՀ Սյունիքի մարզի «Ա. Սարգսյանի անվան Տեղի թիվ 1 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնին՝ խորհրդին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել և անցկացնել տնօրենի ընտրության նոր մրցույթ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Վ. ՀԱԿՈԲՅԱՆ

2018 թ. մարտի 29
ք. Կապան

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ
И НАУКИ

МИНИСТР

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION
AND SCIENCE

MINISTER

0010, Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2, Հեռ./Тел./Tel 54 67 16, 58 03 02, Ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43,
0010, Ереван, В. Саргсян 3, Дом правительства 2, 0010, Y. Sargsyan 3, Government House 2, Yerevan, E-mail: miens@edu.am, www.edu.am

N_____ «_____» _____2018թ.

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հակոբյան

Ի պատասխան Ձեր 2018 թվականի մարտի 15-ի թիվ 01/07/1/1448-18 գրության՝ կից ներկայացնում եմ 2018 թվականի փետրվարի 28-ին կայացած ՀՀ Սյունիքի մարզի «Տեղի թիվ 1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի արդյունքներն ուսումնասիրելու նպատակով ՀՀ կրթության և գիտության նախարարի 2018 թվականի մարտի 20-ի N 197-Ա հրամանով ստեղծված հանձնաժողովի եզրակացությունը:

Հարգանքով՝ ԼԵՎՈՆ ՄԿՐՏՉՅԱՆ

??????? ????????
Mar 27 2018 8:19 PM

Կատ.՝ իրավաբանական վարչություն
Ա. Բաղդասարյան 010 524856

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ ԼԵՎՈՆ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ

Եզրակացություն

ՀՀ Սյունիքի մարզի «Տեղի թիվ 1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար 2018 թվականի փետրվարի 26-ին կայացած մրցույթի գործընթացն ուսումնասիրող հանձնաժողովի ուսումնասիրության մասին

ՀՀ կրթության և գիտության նախարարի 2018 թվականի մարտի 20-ի N 197-Ա հրամանի համաձայն՝ հանձնաժողովը, ի դեմս ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի հանրակրթության վարչության գլխավոր մասնագետ Լ. Բալասանյանի, ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի իրավաբանական վարչության գլխավոր մասնագետ Ա. Բաղդասարյանի և ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության առաջատար մասնագետ Ի. Բալայանի, կատարեց դպրոցի տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար 2018 թվականի փետրվարի 28-ին կայացած մրցույթի գործընթացի փաստաթղթային ուսումնասիրություն:

Ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ դպրոցի տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթը կազմակերպվել է ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշման հավելվածով հաստատված «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի» 6-րդ կետի պահանջի խախտմամբ՝ համաձայն որի խորհուրդը տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը հրապարակում է զանգվածային լրատվության միջոցներով (հանրապետական կամ տեղական ռադիո, հեռուստատեսություն, մամուլ) **հնգօրյա պարբերականությամբ**՝ առնվազն երկու անգամ, ինչը՝ չի արվել:

Վերը նշվածի վերաբերյալ առկա է նաև ՀՀ կրթության և գիտության նախարարի ներկայացուցչի եզրակացությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հանձնաժողովը առաջարկում է սույն եզրակացությունը ներկայացնել լիազորված մարմնին սահմանված կարգով մրցույթի արդյունքները չեղյալ ճանաչել համար:

Լ. Բալասանյան
Ա. Բաղդասարյան
Ի. Բալայան